ՀՀ Արմավիրի մմարզի Արգինայի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

ՀՀ Արմավիրի մարզի Արգինայի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / ծածկագիր 3-2.1 /

Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

բ/ հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

գ/ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է գույքահարկի և հողի հարկի գանձումը, տեղական տուրքերի և վճարների համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը.

դ/ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում է սահմանված կարգով հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց ցուցակը՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար.

ե/ Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ը/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ. 1-ին կարգի մասնագետն ունի Օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ՝

ա/ միջնակարգ կրթություն,

բ/ ՀՀ Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին> <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, << Հողի հարկի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2016 թվականի մարտի 31- ին ժամը 11-00 ին Արգինայի գյուղապետարանի շենքում: Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Արգինայի համայնքապետարան կամ Արմավիրի մարզպետարան՝ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն: հեռ. 0237-2-07-70;

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2016 թվականի մարտի 15 - ի ժամը 18-00-ն: